



հայկական պողպատածուլական ձեռնարկություն „ԱՍԿԵ գրուպ“ ԲԲԸ
армянское сталелитейное предприятие „АСКЕ груп“ ОАО
armenian steel casting enterprise „ASCE group“ OJSC

31/02
01 06 2020թ.

ԱՍԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ

Էական փաստեր և տեղեկություններ ներառող փաստաթուղթ

*2020թ հունիսի 29-ի ժամը 13⁰⁰-ին գումարվող "ԱՍԿԵ ԳՐՈՒՊ"
 ԲԲԸ Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի մասին*

“ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ Տնօրենների խորհրդի 27.05.2020թ. նիստում որոշում է ընդունվել 2020թ-ի հունիսի 29-ին, ժամը 13⁰⁰-ին գումարել “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ: Ժողովն անցկացվելու է Ընկերության վարչական շենքում՝ ք. Չարենցավան, Երևանյան 2 հասցեում:

Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու է 2020թ հունիսի 1-ի դրությամբ:

Ընկերության բաժնետերերի 2020թ հունիսի 29-ին ժամը 13⁰⁰-ին գումարվող ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ տարեկան ֆինանսական հաշվետվության և հաշվեկշռի հաստատում, շահույթի և վնասների հաստատում, աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
2. “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ Տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատում և անդամների ընտրություն:
3. “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ 2020թ տարեկան ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտի ընտրություն և հաստատում:
4. “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ ֆինանսական միջոցների ներգրավման հարցը:
5. “ԱՍԿԵ ԳՐՈՒՊ” ԲԲԸ Կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին (այդ թվում քվեաթերթիկներին) կարելի է ծանոթանալ և ձեռք բերել աշխատանքային օրերին՝ 2020թ հունիսի 2-ից մինչև հունիսի 26-ը ներառյալ Ընկերության կադրերի բաժնում ժամը 10⁰⁰-ից մինչև 15⁰⁰:

Ընկերության բաժնետերերի Ընդհանուր ժողովին մասնակցելու համար բաժնետերը (անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով) կամ նրա կողմից լիազորված անձը (լիազորությունը հաստատված Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի և Բաժնետիրական ընկերությունների մասին Հայաստանի հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան) պետք է 2020թ հունիսի 29-ին

Ժամը 11⁰⁰-ից մինչև 12⁴⁵-ը գրանցվի ժողովի մասնակիցների գրանցամատյանում: Գրանցումից անմիջապես հետո կտրամադրվեն ժողովի օրակարգում ներառված հարցերի քվեաթերթիկները:

ԱՄԿԵ ԳՐՈՒՊ ԲԲԸ Տնօրենների խորհուրդ

Տնօրեն՝



Խ. Անտոնյան